

## ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԶԻՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Նորահայտ վավերագրեր Արտաշես Մուրադյանի կյանքի ու գործունեության մասին\*

**Քանալի բառեր** – Արտաշես Մուրադյան, Զիլան բեյ, հայ-քրդական դաշինք, Արարատի ապստամբություն, Հոյբուն, ՀՅ Դաշնակցություն, Խնուս, Զիլան, քեմալական Թուրքիա, ՕԳՊՈՒ, Իսսան Նուրի փաշա, Իբրահիմ Հըսգե Թելլի:



Արտաշես Մուրադյան

Մուտք

Հայ-քրդական զինակցության փորձեր արվել են ինչպես Օսմանյան կայսրության շրջանում, այնպես էլ հանրապետական Թուրքիայի գոյության

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.08.2021:

Վէմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, թիվ 4 (76), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2021

առաջին տարիներին, մասնավորապես օսմանյան շրջանում այդ զինակցության ջատագույներից էին Հրայր Դժոխքը հայերից և շեյխ Ուբեյդուլլահը քրդերից:

Հայաստանի Հանրապետության գոյության տարիներին հայկական իշխանությունները մեծ ջանքեր գործադրեցին քրդերի հետ հակադրության դաշինք ստեղծելու համար, սակայն հաջողություն չունեցան<sup>1</sup>: Իսկ հանրապետության անկումից հետո պահպանվող փոխադարձ անվստահությունը խոչընդոտ դարձավ շեյխ Սայիդի ապստամբության ժամանակ հայերի և քրդերի գործակցության համար: Բայց դաժան պարտությունը շուտով ստիպեց քրդերին համագործակցել հայերի, մասնավորապես՝ ՀՅ Դաշնակցության հետ, քանզի երկու կողմերի անմիջական նպատակները համընկնում էին: Եվ այդ համագործակցությունն անմիջապես տվեց իր արդյունքները, որովհետև Դաշնակցությունն ուներ ընդհատակում գործելու բազմամյա փորձ, հմուտ զինվորականներ և կազմակերպիչներ, որոնց թվում էր նաև **Արտաշես Մուրադյանը**: Կուսակցության հրահանգով 1927 թ. նա ուղևորվում է Արարատ, որտեղ սկսվել էր քրդական ապստամբությունը, և Ջիլան բեյ կեղծանվամբ ձեռնամուխ լինում ապստամբության կազմակերպման աշխատանքներին: Արտաշես Մուրադյանի ջանքերով շուտով Արարատի ապստամբությունը բարձրանում է որակապես նոր մակարդակի: Հետագա տասնամյակներին քրդերի շրջանում առասպելական կերպար դարձած Ջիլան բեյի՝ Արտաշես Մուրադյանի կենսագրության մասին տարբեր աղբյուրներում միայն կցկտուր տեղեկություններ են պահպանվել: **Ուստի սույն հոդվածը նպատակ է հետապնդում բացահայտելու, թե ով էր Արտաշես Մուրադյան մարդն ու քաղաքական գործիչը:**

## 1. Արտաշես Մուրադյանը մինչև Արարատի ապստամբությունը

Արտաշես Մուրադյանը ծնվել է Խնուսի Հարամիկ գյուղում: Որպես ծննդյան տարեթիվ նշվում է 1894 թվականը, որը թերևս ստույգ չէ: Արտաշեսի հայրը՝ Հակոբը, բժիշկ էր: Նախնական կրթությունը ստացել է Հարամիկի և Կարաքյոփրյուի ազգային տարրական դպրոցներում, որից հետո՝ 1908 թվականին, ուսումը շարունակել է Արմաշի դպրեվանքում:

Ուսումն ավարտելուց հետո վերադառնում է Խնուս և որպես ուսուցիչ աշխատում է Խալչաուշ (հայ.՝ Խաչալույս) գյուղում: 1912 թ. անցնում է Կովկաս և զբաղվում ուսուցչությամբ ու կուսակցական գործերով, սակայն կարճ ժամանակ անց Սովսումում ձերբակալվում է ցարական իշխանությունների կողմից՝ զենքի մաքսանենգության մեղադրանքով: Արտաշեսը բանտարկ-

<sup>1</sup> Տե՛ս **Սասունի Կ.**, Քիրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրուք, տպարան Համազգահին, 1968, էջ 230:

վում է և ազատ է արձակվում միայն 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո: 1917 թ. ապրիլին նա իր մի քանի ընկերների հետ անցնում է Խնուս, որտեղ պատժիչ արշավանք են իրականացնում Խամուր բերդի քրդերի դեմ, որոնք 1915 թ. մասնակցություն էին ունեցել Խնուսի հայերի կոտորածներին: Խնուսում Արտաշեսը մնում է մինչև 1918 թվականը և հայկական զորքերի հետ նահանջում դեպի Երևան: Հայաստանի Հանրապետության կործանումից հետո տարագրվում է Իրան: Իրանում նա ՀՅ Դաշնակցության «Նայիրի (ուղղագրությունը հեղինակին է – Ա. Ս.)»<sup>2</sup> կոմիտեի քարտուղարն էր<sup>3</sup>: Նրա հետ Իրան էին գաղթել նաև աներն իր ընտանիքով, կինը՝ Մարգարիտը, և դուստրը՝ Երագիկը: 1921 թ. ծնվում է Արտաշեսի որդին՝ Արամայիսը: Որոշ ժամանակ անց Մարգարիտը երեխաների և հոր հետ վերադառնում է Հայաստան, իսկ Արտաշես Մուրադյանը մնում է Թավրիզում:

## 2. Արտաշես Մուրադյանը Արարատում. Զիլան բեյ

Պետք է նշել, որ ՀՅ Դաշնակցությունն ուշադիր հետևում էր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, քանզի գիտակցում էր, որ թուրք-քրդական բախումը սարերի ետևում չէ: Անհրաժեշտ էր պատրաստվել առաջիկա մարտերին, և 1924 թ. ՀՅ Դաշնակցությունն ընդունում է քրդերին աջակցելու որոշում: Հենց այդ որոշման հիման վրա էր, որ 1927 թ. Դաշնակցության ջանքերով հաջողվում է կազմակերպել քրդական գրեթե բոլոր քաղաքական ուժերի և ազդեցիկ ընտանիքների համագումարը Լիբանանի Բրիտանյան քաղաքում՝ Վահան Փափազյանի տանը, որտեղ հաջողվում է հարթել բոլոր տարաձայնությունները, միավորել ուժերը մեկ միասնական, համաքրդական կուսակցության՝ «Հոյբուն»-ի մեջ: Ինչ վերաբերում է Արարատ լեռան վրա սկսված ապստամբությանն աջակցելու համար այնտեղ ներկայացուցիչ ունենալու խնդրին, ապա Փարիզում տեղակայված ՀՅԴ Բյուրոն, չնայած Իրանի «Վրեժ»<sup>4</sup> կոմիտեի առարկությանը, որոշում է կայացնում ուղարկելու Արտաշես Մուրադյանին մի քանի պատճառներով. 1. Դեռ Թավրիզում գտնվելու ժամանակ նա ուշադիր հետևել էր քրդերի հակաթուրքական շարժումներին և մասնավորապես Արարատի դեռ նոր սկսված (1926 թ. աշուն) ապստամբությանը և ամեն կերպ օգնում էր ապստամբներին, որոնք Թուրքիայից անցել էին Իրան և պատրաստվում էին վերադառնալու Արարատ<sup>5</sup>: 2. Արտաշեսը շատ

<sup>2</sup> Հայաստանից տարագրված դաշնակցականներից բաղկացած կոմիտեի ծածկանունը: Այլ աղբյուրներում հիշատակվում է որպես խումբ:

<sup>3</sup> Տես Մելիքեան Ե., Հարթ-Խնուս, Անթիլիաս, Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարան, 1964, էջ 243:

<sup>4</sup> ՀՅԴ Առդպատականի կենտրոնական կոմիտեի ծածկանունը:

<sup>5</sup> Տես Դաշնակի և Կարճի, ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 131, թ. 48-52:

լավ գիտեր քրդերեն և քրդերի հոգեբանության լավ ու վատ կողմերը: 3. Արտաշեսն անշահախնդիր, գաղափարական մարտիկ էր, և նյութական բարիքները նրան չէին հետաքրքրում: 4. Խնուսցի Արտաշես Մուրադյանի ընտանիքը ոչ միայն ծանոթ էր քրդերին, այլև նրանց հարգանք էր ներշնչում. Արտաշեսի հայրը՝ բժիշկ Հակոբը, քրդերի ազգային հերոս և հանուն քուրդ ժողովրդի անկախության նահատակված շեյխ Սայիդի մտերիմն էր, իսկ ինքը՝ Արտաշեսը, մտերիմ էր Սայիդի որդու՝ Ալի Ռիզայի հետ և նրա հետ նամակագրական կապ էր պահպանում<sup>6</sup>:

ՀՅԴ ղեկավարությունը չսխալվեց իր հաշվարկներում. եթե մինչ այդ Արտաշեսն աչքի ընկնող կուսակցական գործիչ չէր, ապա Արարատում նա բոլորովին կերպարանափոխվեց: Նա անընդհատ աշխատանքների կիզակետում էր, շրջում էր քրդական ցեղերի մեջ, հաշտեցնում նրանց, միաժամանակ զբաղվում էր Իրանից եկող օգնության և համալրումների արդարացի բաշխմամբ, անտրտունջ տանում էր զրկանքները և մերժում էր իր համար որևէ արտոնյալ կարգավիճակ: Այս որակների շնորհիվ է, որ առ այսօր էլ Արտաշես Մուրադյանը քուրդ ժողովրդի հերոսներից մեկն է: Բացի այդ՝ քրդերը, ի դեմս Արտաշեսի, տեսնում էին հայերի և առաջին հերթին Դաշնակցության ուժը, ինչը նրանց մեծ հավատ էր ներշնչում: Քրդերը նրան ավելի էին վստահում, քան Իհսան Նուրի փաշային, ով իր մարդկային որակներով շատ հաճախ Արտաշեսի հակոտնյան էր: Նա չգիտեր քրդերեն, իր նիստուկացով ավելի շատ նման էր թուրք աղայի, ապրում էր բարեկեցիկ կյանքով, որքանով թույլ էին տալիս պայմանները, բարեհոգի էր թուրք ռազմագերիների հետ, որոնցից շատերին ուղղակի ազատ էր արձակում և իր վրա ծախսում էր բավականին մեծ գումար, որը նրան տրամադրում էր ՀՅ Դաշնակցությունը: Այս փաստերը, ինչպես նաև այն, որ նրա կինը թուրք էր, քրդերի շրջանում կասկած էին հարուցել, որ նա կաշառված է թուրքերի կողմից և մի օր անցնելու է նրանց կողմը: Երկուստեք կասկածն այնքան է խորանում, որ Իհսան Նուրին անձամբ չէր շրջում ցեղերի մեջ և պահանջում է, որ իր թիկնապահները լինեն հայեր<sup>7</sup>:

Արարատում Արտաշես Մուրադյանը գաղտնիության համար գործում էր **Զիլան բեյ** ծածկանունով: Որոշ աղբյուրներում նշվում է նաև **Սալիմ բեկ** տարբերակը<sup>8</sup>: Իսկ իր ղեկավարությանն ուղարկված նամակ-զեկուցագրերում նա ստորագրում էր «Դիտորդ»<sup>9</sup>: Հայտնի է նաև, որ Արտաշեսն

6 Տե՛ս **Письмо Египте Ипханияна Комсу (Ваан Папазян)**, ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 131, թ. 152-153:

7 Տե՛ս **Ռուբեն**, Քրդական գործը Պարսկաստանում, ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 8:

8 Տե՛ս **Մելիքեան Ե.**, նշվ. աշխ., էջ 243:

9 Տե՛ս ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտնի-թերցումներում (1920-ական թվականներ), կազմող և խմբագիր՝ **Վ. Ն. Ղազարխանյան**, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2016, էջ 9:

ուներ շեյխ **Զիլան** և **Բրինդար** կեղծանունները<sup>10</sup>: Մի քանի ամսվա ընթացքում նա կարողանում է համախմբել ոչ միայն Արարատի, այլև Սիփանի, Բինգյոլի, Արտազի, Խնուսի, Բասենի և Մուշի քրդական ցեղերին, իսկ որոշ ժամանակ անց, ձանփորդելով Արարատից դեպի արևմուտք և հյուսիս, միավորում և հաշտեցնում է Կողբի, Սուրմալուի և Կարսի քրդերին: Սակայն, չբավարարվելով այդքանով, նա գաղտնի անցնում է Խորհրդային Հայաստան և հասնում մինչև Բայազետ<sup>11</sup>, որտեղ կապեր է հաստատում այնտեղ ապաստանած հայդարանցիների և հայերի<sup>12</sup> հետ<sup>13</sup>: Զիլան բեյի հեղինակությունն այնքան բարձր էր, որ 1928 թ. Արարատում գտնվող և ոչ մի ցեղ չդավաճանեց ու չանցավ թուրքերի կողմը: Նա և Իհասն Նուրին փոխլրացնում էին իրար. Արտաշեսը քաջ և հանդուգն կատարող էր, իսկ Իհասնը՝ ծրագրող, քանի որ ապստամբներից միայն նա ուներ զինվորական կրթություն:

Այս ամենի արդյունքն այն էր, որ թուրքական զորքերը ոչ 1927 թ. և ոչ էլ 1929 թ. չկարողացան ձնշել ապստամբությունը և կրեցին մի շարք ծանր պարտություններ: Այդ իրողությունը խոր անհանգստություն առաջ բերեց ոչ միայն Թուրքիայի, այլև Խորհրդային Միության ռազմաքաղաքական ղեկավարության շրջանում: Եթե ապստամբությանը մասնակցեին միայն քրդերը, ապա այն բոլշևիկյան ղեկավարության կողմից կդիտարկվեր իբրև ցեղային հերթական ապստամբություն, որպիսիք գրեթե ամեն տարի տեղի էին ունենում խորհրդա-թուրքական սահմանի մոտ: Սակայն ՀՅ Դաշնակցության մասնակցությունը Մոսկվայում կասկած առաջացրեց, որ Արարատի ապստամբությունն ուղղորդված է բրիտանացիների կողմից: Իրենց հերթին քեմալականներն ամեն կերպ փորձում էին ապացուցել բոլշևիկներին, որ դաշնակցականները միջնորդ են բրիտանացիների և քրդերի միջև, ուստի ներկայացնում էին «անհերքելի» ապացույցներ՝ ամենայն մանրամասնություններով: Ըստ նրանց՝ Ռուբեն փաշան (Մինաս Տեր-Մինասյանը)<sup>14</sup>, ապստամ-

10 **Բրինդար** քրդերեն նշանակում է «վիրավոր»: Ըստ տարածված մի վարկածի՝ Արտաշեսը այդ հեզնական մականունը ստացել է դեռ 20-րդ դարի սկզբներին, երբ տակավին երիտասարդ կշվում էր Քևորգ Չավուշի իրամանատարության ներքո: Նրան այդ ժամանակ չէին վստահում հրացան, և ջոկատում Արտաշեսի պարտականությունն էր չոր փայտերից անձուխ խարույկներ վառելը: Այդ իսկ պատճառով նա միակն էր ջոկատում, որ սպիներ չուներ, այսինքն՝ երբեք չէր վիրավորվել: Մասնավորապես դրա մասին նշված է Խ. Ղաշտենցի «Ռանչպարների կանչը» գրքում:

11 Բնօրինակում գրված է «Բայազետ»: Ամենայն հավանականությամբ, խոսքը Նոր Բայազետի (ներկայումս՝ Գավառ) մասին է:

12 Ցեղասպանությունից հետո արևմտահայերի բավականին ստվար զանգված հաստատվեց Գավառում և լապտղերում: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում մշեցիները:

13 Տե՛ս **Ռուբեն**, Քրդական գործը Պարսկաստանում, ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 7: Տե՛ս նաև **Սայիյան Ա.**, Քրդական գործը Պարսկաստանում, «Վեմ», Եր., 2018, N 2, էջ 254, **Սայիյան Ա.**, Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաժիրում, Եր., 2017, էջ 114:

14 **Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյան** (1882-1951) – հայ ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակից, ՀՅԴ անդամ: 1915 թ. եղել է Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից: Անկախ Հայաստանում 1920 թ. մայիսի 5-ին Հանո Օհանջանյանի կառավարությունում դառնում է ռազմական նախարար ակտիվ մասնակցություն ունենալով բոլշևիկյան և թուրք-թաթարական խռովությունները ձնշելու գործում: Հանրապետության կործանումից հետո անցնում է Սյունիք Գարեգին Նժդեհի կողմից ստեղծված Լեռնահայաստան, իսկ դրա կործանումից հետո՝ Պարսկաստան: Արտասահմանում ծավալել է հակաբոլշևիկյան գործունեություն, ինչի համար խորհրդային

բության ժամանակ Թեհրանում հանդիպել է բրիտանական դեսպանության ռազմական կցորդին և խնդրել, որ Անգլիան և Իրանը քրդերին զենք մատակարարեն<sup>15</sup>: Այս քայլերը տվեցին իրենց արդյունքները և խորհրդային իշխանությունները որոշում ընդունեցին ամեն գնով ոչնչացնելու Հյուսիսային Իրանի դաշնակցական կազմակերպությունը: Այդ նպատակով Իրան է ուղարկվում հայկական արմատներով փորձառու հետախույզ Գեորգի Աղաբեկովը (իսկական ազգանունը՝ Հարությունով):

Պետք է նշել, որ խորհրդային իշխանությունները քրդերի առնչությամբ ունեին ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանողական նպատակներ: Մեծ Բրիտանիայի հետ հավանական պատերազմի դեպքում նախատեսվում էր զինել Ատրպատականի քրդերին և ուղարկել Իրաք՝ ոչնչացնելու բրիտանական ռազմական օդանավակայանները՝ այդպիսով չեզոքացնելով Բաքվի նավթահանքերի ռմբակոծման վտանգը: Իսկ Խորասանի ցեղերին պատրաստվում էին անգամ ուղարկելու Հնդկաստան՝ այնտեղ գամելու բրիտանական զորքերին և չթողնելու, որ հարձակվեն խորհրդային Միջին Ասիայի վրա: Քրդերը բուլշևիկներին անհրաժեշտ էին նաև որպես ուժ՝ Թուրքիայի ու Իրանի վրա ճնշում գործադրելու և նրանցից ռազմա-քաղաքական ու տնտեսական զիջումներ կորզելու նպատակով: Իսկ պաշտպանողական նպատակն այն էր, որ չթողնեին բրիտանացիներին միավորել քրդերին, հայերին և այլ ժողովուրդների՝ Կովկասի վրա հարձակվելու համար<sup>16</sup>: Այս առումով բացառություն չէր և Արարատի ապստամբությունը. ապստամբներին իրենց ազդեցության տակ վերցնելու նպատակով դեռևս 1927 թ. մայիսի ծանր մարտերի ժամանակ, դաշնակցականների ձեռք բերած տեղեկությունների համաձայն, բուլշևիկները քրդերին տվել էին 150 հազար փամփուշտ<sup>17</sup>: Այս նպատակով խորհրդային հետախույզ Աղաբեկովը դաշնակցականների և քրդերի, ինչպես նաև Փարիզում գտնվող ՀՅԴ Բյուրոյի և Իրանի տարբեր քաղաքների դաշնակցական կոմիտեների միջև եղած գաղտնի նամակագրության բացահայտման գործը հանձնարարում է Թավրիզ գործուղված Թիֆլիսի ՕԳՊՈՒ-ի աշխատակից Մինասյանին: Իսկ Աղաբեկովի այդպես էլ անհայտ մնացած N 10 գործակալը չորս ամիս տևած աշխատանքի արդյունքում 1927 թ. սեպտեմբերին կարողանում է ձեռք բերել դաշնակցականների գաղտնի նամակագրությունը: Խնդրի բարդությունն այն էր, որ ՀՅ Դաշնակցության ողջ նամակագրությու-

դեկավարության կողմից ճանաչվել է հակախորհրդային վտանգավոր գործիչ: 1948 թ. վերջնականապես հաստատվում է Փարիզում, որտեղ էլ մահանում է 1951 թ.:

15 Տե՛ս **Bilal N. Şimşir**, İngiliz belgelerle Türkiye’de Kürt sorunu (1924-1938): Şeyh Sait, Ağrı ve Dersim ayaklanmaları, 2. Baskı, Türk Tarih Kurumu, Ankara, 1991, էջ 183:

16 Քանի որ այս թեման սույն հոդվածին առնչվում է ոչ անմիջականորեն, նպատակահարմար ենք համարել տալ սուկ ընդհանուր տեղեկություններ: Ավելի մանրամասն տե՛ս **Агабеков Г.**, Секретный террор. Исповедь резидента, М., изд. «Яуза», 2013, էջ 223:

17 Տե՛ս **В Бюро АРФД**, ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 131, թ. 185-198:

նը կողավորված էր և, բացի այդ, գրված էր քիմիական թանաքով: Սակայն Միհասայանին հաջողվում է իմանալ կողը և քիմիական թանաքի բաղադրությունը, իսկ որոշ ժամանակ անց՝ կաշառել Թավրիզի փոստային բաժանմունքի պաշտոնյաներից մեկին, որը նրան էր տալիս դաշնակցականների և մուսավաթականների նամակները՝ պատճենելու համար<sup>18</sup>:

ՕԳՊՈՒ-ն տեղեկություններ ուներ, որ Թավրիզի կոմիտեն<sup>19</sup> ոչ միայն օգնում էր քրդերին, այլև կապ էր պահպանում Խորհրդային Հայաստանում թաքնված իր կուսակիցների, ինչպես նաև ընդդիմադիր այլ ուժերի հետ՝ պարբերաբար այնտեղ ուղարկելով իր մարդկանց, որոնք բերում էին ոչ միայն նամակներ, այլև գումար՝ ընդհատակյա գործունեությունը շարունակելու համար:

Չեկիստները գիտեին Իրանում ՀՅԴ-ի ծավալած գործունեության մասին, քանի որ նրանց ձեռքում էին հայտնվել Ե. Իշխանյանի զեկուցագրերը՝ ուղղված ՀՅԴ Բյուրոյին, որոնցում նա տեղեկացնում էր Արտաշես Մուրադյանի՝ Արարատից ուղարկած զեկույցների ու ծրագրերի, ինչպես նաև Խորհրդային Հայաստանում, Վրաստանում ու Լեռնային Ղարաբաղում գործող ընդհատակյա դաշնակցական կառույցի մասին: Այս տեղեկությունները հնարավորություն տվեցին Խորհրդային Հայաստանի ՕԳՊՈՒ-ին բացահայտելու ԽՍՀՄ տարածքում գործող դաշնակցականներին և ձերբակալելու նրանց: Իսկ Իշխանյանի և Մուրադյանի, ինչպես նաև Փարիզի ՀՅԴ Բյուրոյի և դաշնակցականների միջև նամակագրությունը Թեհրանում խորհրդային լիազոր ներկայացուցիչ Յակով Դավթյանը<sup>20</sup> տրամադրեց Իրանի ամենաազդեցիկ նախարարին՝ Թեյմուրթաշին<sup>21</sup>: Նա այդ նյութերը հանձնեց նաև Թավրիզի թուրքական հյուպատոսին, և թուրքական կողմը ստացավ շատ կարևոր տեղեկություններ Արարատի ապստամբությանը ՀՅԴ մասնակցության մասին<sup>22</sup>:

Այսպիսով՝ խորհրդային և թուրքական իշխանություններն ունեին անհերքելի ապացույցներ Իրանի տարածքից իրենց երկրների դեմ իրականացվող գործողությունների մասին, և իրանական կառավարությանը ոչինչ չէր

18 Տե՛ս **Агабеков Г.**, նշվ. աշխ., էջ 206:

19 Խոսքը Ատրպատականի «Վրեժ» կենտրոնական կոմիտեի մասին է, որը, համաձայն ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովի որոշման, ենթարկվում էր Հայաստանի Պատասխանատու մարմնին:

20 Իրականում **Յակով (Հակոբ) Դավթյանը (Դավիդով)** ոչ միայն դիվանագետ էր, այլև հետախույզ: Ծնվել է 1888 թ. Նախիջևանում: 1907 թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի համալսարան: 1920 թվականից աշխատել է ԱԳԺԿ մարմիններում և ապա Ֆ. Չերժինսկու խնդրանքով աշխատանքի է անցել Արտաքին հետախույզությունում (ԱՀ), դառնալով նրա առաջին ղեկավարը (1920 թ. նոյեմբեր - 1921 թ. օգոստոս): 1922 թ. Լիտվայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչն էր, 1922-1925 թթ.: Չինաստանում լիազոր ներկայացուցիչ խորհրդակալը՝ ռեզիդենտուրայի ղեկավարը: 1925-1927 թթ. նշանակվել է Ֆրանսիայում ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչության խորհրդական: 1927-1930 թթ. ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչն էր Իրանում, 1932-1934 թթ.: Հունաստանում, իսկ 1934-1937 թթ.: Լեհաստանում: Անհիմն մեղադրանքով գնդակահարվել է 1938 թ., արդարացվել է 1957 թ.:

21 **Արդուլիուսեյն Թեյմուրթաշ** (1883-1933) – պարսիկ քաղաքական և պետական գործիչ, ով նպաստել է Իրանի գահի Ղաջարներից Փեհլևիներին անցմանը: 1924-1925 թթ. եղել է հանրային աշխատանքների նախարար: 1925-1932 թթ. զբաղեցրել է արքունիքի նախարարի պաշտոնը, համարվել է «գորշ կարդինալ» և երկրորդ մարդը շահից հետո: 1932 թ. ձերբակալվել է հօգուտ ԽՍՀՄ-ի լրտեսության մեղադրանքով և մեկ տարի անց մահացել բանտում (ըստ որոշ կարծիքների նրան թունավորել են շահի հրամանով):

22 Տե՛ս **Агабеков Г.**, նշվ. աշխ., էջ 332:

մնում անելու, քան արդեն պետական մակարդակով սկսելու դաշնակցականների և քրդերի ձեռքակալություններն ու աքսորը: Նրանց հատկապես զայրացրել էր դաշնակցականների գաղտնի նամակագրությունը, որ, առանց իրենց ինացության, հարևան երկրների տարածքում իրականացնում էին գործողություններ՝ հարվածի տակ դնելով Իրանի պետական շահը:

Կաթվածահար անելով ՀՅԴ գործունեությունը Իրանում ու զրկելով նրան և քուրդ ապստամբներին Իրանի հովանավորչությունից՝ խորհրդային հատուկ ծառայությունները որոշում են ձեռքակալել Արտաշես Մուրադյանին՝ այդպիսով գլխատելու Արարատի ապստամբությունը: Կազմվում է հատուկ գործողության ծրագիր, որպեսզի կարողանային դուրս բերել նրան Արարատից և ձեռքակալել: Ի վերջո, խորհրդային հատուկ ծառայություններին հայազգի չեկիստների միջոցով 1929 թ. ամռանը հաջողվում է կապ հաստատել Արտաշես Մուրադյանի հետ և ներշնչել, թե իբր խորհրդային իշխանություններն աջակցում են քրդերի պայքարին, և հանդգնել իջնել Արարատից ու անցնել Խորհրդային Հայաստան՝ զինամթերք և այլ օգնություն ստանալու նպատակով, սակայն սահմանն անցնելուն պես նրան ձեռքակալում են և աքսորում Վորկուտա քաղաք<sup>23</sup>:

Ըստ Ի. Նուրիի «Արարատի ապստամբությունը» հուշագրության՝ Արտաշես Մուրադյանի ձեռքակալությունը տեղի է ունեցել հետևյալ կերպ. 1929 թ. ամռան մի օր Նուրիին և Մուրադյանին է մոտենում մի քուրդ և հանձնում մի նամակ, որը, ըստ նրա, տվել էր Մուրադյանի հորեղբոր որդին, որը, լսելով վերջինիս՝ Արարատում գտնվելու մասին, Թիֆլիսից եկել էր Երևան, որպեսզի հանդիպի նրան, ուստի խնդրում էր Արտաշես Մուրադյանին գնալ Արաքսի ափ: Նուրի փաշան Մուրադյանի հետ ուղարկում է 15 քուրդ հեծյալների՝ Էմերե Բեշոյի գլխավորությամբ: Մոտենալով ռուս սահմանապահներին՝ նրանք տեսնում են, որ նրանց հրամանատարը հայ է, որը, սակայն, հրաժարվում է հայերեն խոսելուց և ռուսերենով Մուրադյանին հրավիրում է իր տուն՝ ասելով, թե նրա հորեղբորորդին ուր որ է կհասնի, և իր տանը կհանդիպեն: Մուրադյանն անցնում է գետը Էմերե Բեշոյի տրամադրած չորս քրդերի հետ: Սակայն, տուն մտնելով, նրանք զինաթափվում և ձեռքակալվում են չեկիստների կողմից և տարվում Երևան, այնտեղից էլ՝ Թիֆլիս: Ի. Նուրին նամակ է գրում սահմանապահ ուղեկալի պետին՝ խնդրելով վերադարձնել բոլոր հինգին՝ իրենց զենքերով և ձիերով հանդերձ: Բոլշևիկները վերադարձնում են չորս քրդերին: Ի. Նուրին երկրորդ անգամ է նամակ գրում՝ խնդրելով վերադարձնել նաև Մուրադյանին: Սակայն երբ քրդերը Սայիդ Ռասուլի գլխավորությամբ մոտենում են սահմանին, ռուս սահմանապահները կրակ են բացում նրանց ուղղությամբ՝ վիրավորելով Ռասուլին:

23 Տե՛ս Ռուբեն, Քրդական գործը Պարսկաստանում, ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 119, թ. 7:



Մի քանի օր անց վրեժխնդիր լինելու համար Նուրին այդտեղ է ուղարկում մի դեպք<sup>24</sup>, որը գնդացրով գնդակոծում է սահմանային ավանը: Որոշ ժամանակ անց Նուրին իմանում է, որ Մուրադյանն արքայով է Սիբիր<sup>25</sup>: Իր հերթին վերջինիս համերկրացի Եղիշե Մելիքյանը գրում է, որ ոչ թե Արտաշեսի հորեղբոր որդին էր Թիֆլիսից եկել, այլ նրա հարազատ Լևոն եղբայրը՝ Երևանից: Ինչ վերաբերում է նրա հետագա ճակատագրին, ապա Մելիքյանը հավելում է, որ 1934 թ. Արտաշեսը նամակներ էր գրում Թավրիզի այն ընտանիքի 7-8 տարեկան աղջկա անունով, որտեղ ժամանակին բնակվել էր Ատրպատականում մինչև Արարատ մեկնելը: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին դադարում են Արտաշեսից նամակներ ստացվել, իսկ հետո ներկայացվում է, թե իբր նա մահացել է պատերազմի ժամանակ թոքախտից<sup>26</sup>: Սակայն, ռուսական իրավապաշտպան կազմակերպությունների ձեռք բերած վերջին տեղեկությունների համաձայն, Արտաշես Մուրադյանը գնդակահարվել է 1938 թ. հունվարի 4-ին՝ Արխանգելսկի մարզի ՆԳԺԿ վարչության եռյակի կայացրած դատավճռով<sup>27</sup> (տե՛ս Հավելված 5):

Այս մույթ պատմությունն ուսումնասիրելու ընթացքում՝ Արտաշես Մուրադյանի կենսագրության մասին տեղեկություններ հավաքելիս, հանդիպեցինք մի քանի պնդումների, համաձայն որոնց՝ Արտաշես Մուրադյանը խորհրդային հատուկ ծառայությունների, իսկ ավելի կոնկրետ՝ Թիֆլիսի ՕԳՊՈՒ-ի կողմից հավաքագրված գործակալ է եղել<sup>28</sup>: Արդարության համար պետք է նշել, որ որևէ ապացույց չի բերվում այս պնդման օգտին: Բայց նրան որպես գործակալ կասկածում էին նաև իր հարազատ կուսակցությունում, մասնավորապես կասկածներ ուներ իր անմիջական ղեկավար Եղիշե Իշխանյանը<sup>29</sup>: Ոչ ուղիղ, բայց կասկածելի է նաև նրա ձերբակալման պատմությունը: Նախ՝ կասկածելի է թվում, որ դաշնակցական Արտաշես Մուրադյանը, ով 1920-1921 թթ. կռվել էր բոլշևիկների դեմ և լավ գիտեր նրանց, առանց որևէ կասկածի, ուղեկալի բոլշևիկ հրամանատարի հրավերով համաձայնում է անցնել պետական սահմանը և ուղեկալի շենքում սպասել իր բարեկամին: Սակայն սա էլ ամենը չէ. Ռուբեն Տեր-Մինասյանն իր հաշվետվության մեջ նշում էր, որ Արտաշեսը ձերբակալվել է, երբ, հավատալով բոլշևիկների՝ զենք և այլ օգնություն տալու խոստումներին, անցել է խորհրդա-թուրքական սահմանը: Ա-

24 **Ղեսթե** - քրդական պարտիզանական թեթև հեծյալ ստորաբաժանում, որը բաղկացած էր 4-5 հոգուց և նախատեսված էր հակառակորդի թիկունքում հետախուզա-դիվերսիոն գործողությունների համար:

25 Տե՛ս **Ihsan Nuri**, *Ağrı Dağı İsyanı*, MED Yayıncılık, İstanbul, 1992, էջ 63:

26 Տե՛ս **Մելիքեան Ե.**, նշվ. աշխ., էջ 244:

27 Տե՛ս Списки жертв, <http://lists.memo.ru/d23/f395.htm> (մուտք՝ 11.07.2021): Տե՛ս նաև Покаяние: Коми республиканский мартиролог жертв политических репрессий. Возвращенные имена: Список жертв, <http://vizs.nlr.ru/person/book/komi/14/2110> (մուտք՝ 11.07.2021):

28 Տե՛ս Партизаны на поводке, <http://www.hist.ru/kurdy.html> (մուտք՝ 26.06.2021):

29 Տե՛ս Հ3 Ղաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտնաթերցումներում (1920-ական թվականներ), էջ 15: Արտաշես Մուրադյանի հանդեպ կասկածներն այնքան էին խորացել, որ ՀՅԴ «Վրեժ» կենտրոնական կոմիտեի պահանջով Գերագույն մարմինը սկսել էր հետաքննություն, որն ապացուցել էր նրա անմեղությունը (տե՛ս նույն տեղում, էջ 198):

վելին՝ իր այս վարկածը նա ներկայացրել է Եգիպտոսում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլայ Նովիկովին ուղարկված նամակում: Ըստ նրա՝ Արարատի ապստամբության իրական ղեկավար Արտաշես Մուրադյանը՝ Ջելիմ խանը, ձերբակալվել է 1926 թվականին (այստեղ Ռուբենը տարեթիվը սխալ է նշել – Ա. Ս.), երբ **խորհրդային իշխանությունների հրավերով իջել էր Արարատից և անցել Արաքս գետը՝ վերջիններից սպառազինություն ստանալու և հետագա օգնությունն ապահովելու նպատակով, և արքորվել էր Հյուսիսային երկրամասի Վորկուտա քաղաք**<sup>30</sup>: Այսինքն՝ Արտաշես Մուրադյանը շփման մեջ էր խորհրդային հատուկ ծառայությունների հետ, որոնք խոստացել էին զենք և այլ օգնություն՝ իրենց պայմաններն ընդունելու դիմաց: Այս տարբերակն ավելի քան հավանական է, քանի որ Մուրադյանի ընտանիքն ապրում էր Խորհրդային Հայաստանում, ինչը հնարավորություն էր տալիս չեկիստներին պահելու նրանց **որպես պատանդներ** և իրենց պայմանները թելադրելու Արտաշեսին: Ամենայն հավանականությամբ, նրանք ցանկացել են օգտագործել Արտաշեսին իրենց ծրագրերն իրականացնելու համար, իսկ երբ դա չի ստացվել, ուղղակի ստիպել են նրան գնալ և հանձնվել: Հայաստանում էր Արտաշես Մուրադյանի ընտանիքը՝ կինը՝ Մարգարիտան, դուստրը՝ Երազիկը, և որդին՝ Արամայիսը, որոնք ապրում էին նրա աներոջ տանը:

Մուրադյանի ձերբակալությունից մի քանի ամիս անց՝ 1929 թ. նոյեմբերի 21-ին, ՀՍՍՌ Պետական քաղաքական վարչությանը կից հատուկ խորհրդակցության կոլեգիայի որոշմամբ մեկուկես տարվա ազատազրկման է դատապարտվում նրա աները՝ Նոր Բայազետի քահանա Տեր-Գրիգոր Ներսեսի Մելիքշահումյանը՝ հակախորհրդային գործունեության, ՀՅԴ անդամ լինելու և Փետրվարյան ապստամբության (ըստ բոլշևիկների՝ ավանտյուրայի) ժամանակ կոմունիստների դեմ մղված մարտերին ակտիվորեն մասնակցելու մեղադրանքով<sup>31</sup>: Դատապարտվում է նաև Արտաշեսի կինը՝ Մարգարիտան, որն իր պատիժը կրում է Նոր Բայազետի բանտում: Երազիկին մոր բանտարկությունից հետո իր խնամքի տակ է առնում Արտաշեսի եղբայրը՝ Լևոնը, որը բնակվում էր Լենինականում (այժմ՝ Գյումրի): Այս ծանր փորձություններին չդիմանալով՝ 1933 թ. մահանում է Արտաշեսի որդին՝ Արամայիսը: Այդ օրերին Մարգարիտան ազատ է արձակվում: Հնարավոր է, որ որդու մահը նպաստել է նրա ազատ արձակմանը:

Հանրագումարի բերելով այս ամենը՝ հավելենք, որ Արտաշես Մուրադյանի՝ խորհրդային իշխանությունների հետ շփումը բացատրվում է ոչ թե ՕԳՊՈՒ գործակալ դառնալու հանգամանքով (չնայած այս վարկածն էլ, թե-

30 Стн Письмо Чрезвычайному и Полномочному Посланнику СССР в Египте Гражданину Николаю Васильевичу Новикову, 8.03.44, ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 119:

31 Стн **Ժամհարյան Խաչատուր Ավետիսովիչ**, ՀՍՍՀ Դատախազություն, ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 3565, թ. 26-27:

կուզ տեսականորեն, բայց հնարավոր է), այլ նրանով, որ Արտաշես Մուրադյանը ժամանակին եղել է վտարանդիներից կազմված ՀՅԴ «Նայիրի» խմբի քարտուղարը, որի անդամների մեծ մասը թշնամաբար չէր վերաբերվում Խորհրդային իշխանությանը և հարում էր, այսպես կոչված, «սմենովեյական» հոսանքին<sup>32</sup>: Նրանք գտնում էին, որ անհրաժեշտ է հաշտության և համագործակցության ուղիներ փնտրել բոլշևիկների հետ, քանի որ նրանք են Հայաստանում գործող իշխանությունը, և նրանց հետ համագործակցությունը կլուծի հայության առջև ծառայած շատ խնդիրներ, որոնցից էին, օրինակ, հայ գաղթականների վերադարձը և Հայ Դատի հանդեպ հայանպաստ դիրքորոշման ձևավորումը: Հարկ է նշել, որ այս հարցում նրանց գաղափարական հակառակորդներն էին Ատրպատականի դաշնակցականների «Վրեժ» կենտրոնական կոմիտեի անդամները, որոնք բոլշևիկների անհաշտ փոխյաններն էին<sup>33</sup>: Այս իրողության լույսի ներքո հասկանալի է դառնում, թե ինչու էր Արտաշես Մուրադյանն իր ընտանիքն աներոջ հետ հետ ուղարկել Խորհրդային Հայաստան:

\*\*\*

Արտաշես Մուրադյանի և նրա ընտանիքի անդամների հետագա ճակատագրի մասին մեզ տեղեկություններ է տրամադրել նրա թոռը՝ Երազիկի որդի **Արտաշես Հովհաննիսյանը**, որն իր մահկանացուն կնքել է 2017 թ.: Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ արդեն բացվել էր հատուկ ծառայությունների և ոստիկանության՝ ստալինյան բռնաձնշումներին վերաբերող արխիվների մեծ մասը, Արտաշես Հովհաննիսյանը հարցում է կատարել ՀՀ ԱԱԾ և ՆԳՆ՝ իր պապի մասին ավելի հստակ տեղեկատվություն իմանալու նպատակով, սակայն նրան պատասխանել են, որ Արտաշես Մուրադյանի մասին ոչ Ազգային անվտանգությունում և ոչ էլ Ոստիկանությունում ոչ մի տեղեկություն չկա (տե՛ս Հավելված 1): Այսինքն՝ **Արտաշես Մուրադյանի՝ Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած ձերբակալության, հարցաքննության և դատավարության մասին բոլոր տեղեկություններն այնքան գաղտնի և կարևոր են եղել, որ նրա գործը Երևանում չեն թողել և տարել են կամ ԹԻՖլիս (ЗакЧК), կամ էլ Մոսկվա:**

Ըստ Արտաշես Հովհաննիսյանի պատմածի՝ Արտաշես Մուրադյանը բանտարկված է եղել Յարոսլավլ քաղաքում, և պատժաժամկետը պետք է ավարտվեր 1934 թվականին: Նա նույնիսկ նամակ է ուղարկել իր եղբորը՝ Լևո-

32 **Սմենովեյականության** մասին ավելի մանրամասն տես **Հակոբյան Ա.**, ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը լուծարելու Հայկոմկուսի փորձերը. 1920-ական թվականներ, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2020, էջ 171-231:

33 Տես ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտնիքներում (1920-ական թվականներ), էջ 38-39:

նին՝ խնդրելով գրել իրեն նրա և իր ընտանիքի հասցեները, որպեսզի վերադարձից հետո գտնի նրանց (տե՛ս Հավելված 4): Սակայն պատժամակետի ավարտից հետո Արտաշես Մուրադյանն ազատ չի արձակվել և նորից բանտարկվել է: Նամակը Լևոնին է տվել նրա հարևանը: Նույն երեկոյան միլիցիոներները կամ չեկիստները գնում են Լևոնի մոտ և հարցնում, թե արդյոք նա Արտաշեսի եղբա՛յրն է և ստացե՞լ է նրանից նամակ: Լևոնը հաստատում է, որ Արտաշեսի եղբայրն է, սակայն ժխտում է նամակի ստացման փաստը: Միլիցիոներները Լևոնին տանում են բանտ, որտեղ նա սրտի հիվանդությունից երեք օր անց մահանում է: Բոլշևիկյան իշխանությունները հրաժարվում են Լևոնի դին հանձնել հարազատներին, և մինչ օրս նրա շիրիմի տեղն անհայտ է:

Անհայտ է նաև Արտաշես Մուրադյանի աներոջ՝ Տեր-Գրիգոր Մելիքշահունյանի գերեզմանի վայրը: Մեկուկես տարվա բանտարկությունից հետո նա ազատ է արձակվում, սակայն 1937 թ. նորից բանտարկվում է և ուղարկվում Ուզբեկստան, որտեղ և կնքում է իր մահկանացուն<sup>34</sup>:

Եվ վերջապես, եթե հավատանք ռուսական իրավապաշտպան կազմակերպությունների վերջերս հրապարակած տեղեկություններին, Արտաշես Մուրադյանը գնդակահարվել է 1938 թ. հունվարի 4-ին: Նրա գերեզմանը ևս անհայտ է: Կարելի է ենթադրել, որ Արտաշես Մուրադյանի և նրա աներոջ հանդեպ վերաբերմունքի փոփոխությունը 1937 թ. գանգվածային բռնաձնշումների քաղաքականության արդյունքն էր: Սակայն առ այսօր Արտաշես Մուրադյան անուն-ազգանունը խոր հարգանք է վայելում հայերի և հատկապես քրդերի շրջանում, որոնց համար նա դարձել է ազգային հերոս՝ **Զիլան բեյ**:

Արտաշես Մուրադյանի կերպարը ժամանակին այնքան վառ ու առինքնող է եղել, որ նրա մասին հիշատակումներ կան գեղարվեստական գրականության մեջ, ինչպես, օրինակ՝ Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը», Սամվել Միերյանի «Մենավոր բազեն» գրքերում, և անշուշտ Զիլան բեյի մասին քրդական ժողովրդական բանահյուսության մեջ՝ երգերում և բանաստեղծություններում:


**Արամ Ս. Սայիյան**  
*Պատմ. գիտ. թեկնածու*

**Արամ Ս. Սայիյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 1920–1930–ական թվականների քրդական ապստամբությունների և թուրք–քրդական ու հայ–քրդական հարաբերությունների պատմության հիմնահարցերը:

34 Տե՛ս **Մարտունի**: Քաղաքի պատմությունը, Եր., «Լուսաբաց» հրատարակչատուն, 2005, էջ 147:

Հավելված 1. ՀՀ ԱԱԳՎ (ներկայումս՝ ԱԱԾ) պատասխանը  
Արտաշես Հովհաննիսյանի հարցմանը

ԱՐՄԻՎ



Վէյն համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) փարի, թիվ 4 (76), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Ազգային Անվտանգության  
Պետական Վարչություն

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
Государственное Управление  
Национальной Безопасности

№ Հ-217

гор. Ереван  
քաղ. Երևան

«20» մայիսի 1996 թ.

Քաղ. Արտաշես Մուկուչի Հովհաննիսյանին  
Մարտունի ավան

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ի պատասխան Ձեր դիմումի, հայտնում ենք, որ ՀՀ ներքին գործերի նախարարության, Ազգային անվտանգության նախարարության արխիվներում որևէ տեղեկություն Ձեր պապի՝ Արտաշես Հակոբի Մուրադյանի մասին չի հայտնաբերվել և բավարարել Ձեր խնդրանքը, ցավոք սրտի, չենք կարող:

ՀՀ Ազգային անվտանգության  
նախարարության աշխատակից /ստորագր./ Գ. Ավետյան





